ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է

Հայոց պատմության ամբիոնի

N5 նիստում

"25"11.2022թ.

# ԱՄԲԻՈՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2022

1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

| |
|---|
| Հաշվետու տարում ամբիոնի ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, կատարված ուսումնական աշխատանքի ծավալը: |
| *Ամբիոնի՝ հաշվետու տարում ուսումնական աշխատանքների ծրագրված ծավալը, ինչպես նաև կատարված ուսումնական ընդհանուր աշխատանքի ծավալը գնահատվում են բավարար, քանի որ դրանք իրականացվել են աշխատանքային պլանով նախատեսված անելիքներին ու առաջադրված ծրագրերին համապատասխան, ողջ ծավալով, անհրաժեշտ հետևողականությամբ և արդյունավետ մեթոդներով:* |
| Հաշվետու տարում ամբիոնի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության մոտեցումներն ու քաղաքականությունը, որքանով է այն նպաստել ուսանողակենտրոն ուսուցմանը: |
| *Աշխատանքներ են իրականացվել՝ ուղղված ուսումնառության արդյունքների և նրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մոտեցումների ու մեթոդների արդիականացմանը: Դասավանդման և ուսումնառության մոտեցումների և մեթոդների պարբերաբար արդիականացման ուսումնասիրությունները և քննարկումները, դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման շուրջ կատարված աշխատանքներն ամբիոնում, հիմք են տալիս արձանագրելու, որ դասավանդման և ուսումնառության ներկա մեթոդները արդյունավետ են: Մասնավորապես, խոսքը վերաբերում է որակի ապահովման չափանիշների լույսի ներքո ՄԿԾ-ի առարկայական նկարագրերի վերանայմանը և էլեկտրոնային ԱՈՒՄՓ ձևաչափերի լիարժեք ներդրմանն ուղղված միջոցառումների և ջանքերի ձեռնարկմանը: Միանշանակ է, որ նշված քաղաքականությունը նպաստել է ուսանողակենտրոն ուսուցմանը: Այն բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր կուրսերում ներդրվելու պարագայում առավել կբարելավվի մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքների առաջընթացը:*<br><br>*Միևնույն ժամանակ, հաշվետու տարում, կատարված աշխատանքները ցույց են տալիս, որ առցանց եղանակով իրականացվող կրթական գործունեությունը իր ընդհանուր ծավալի մեջ ավելի քիչ արդյունավետ է, քան առերես դասավանդումը:* |
| Հաշվետու տարում ամբիոնում կիրառված ուսանողների գնահատման համակարգը, գնահատման բաղադրիչների ձևավորման մոտեցումները, ուսումնառության արդյունքներից հետ կապը և ակադեմիական ազնվության ապահովմանն ուղղված աշխատանքները: |
| *2021-2022 ուստարում բուհում գործում է գնահատման բաղադրիչների միասնական համակարգ, և ամբիոնը ուսումնական գործընթացի գնահատումն իրականացնում է այդ բաղադրիչներով՝ գնահատման սահմանված չափորոշիչներին համապատասխան: Դա հնարավորություն է տալիս արձանագրել ուսումնական գործընթացի դրական վերջնարդյունքներ:Ակադեմիական ազնվության ապահովման նպատակով միջանկյալ և ամփոփիչ քննություններին դասավանդող դասախոսից բացի ապահովվվում է նաև ընթերակայի, գործնական պարապմունքներ անցկացնող դասախոսի, հնարավորության դեպքում նաև ամբիոնի վարիչի կամ դեկանատի ներկայացուցչի ներկայությունը:* |
| Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները: |
| *Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը վերաբերել են դասավանդման գործընթացի պատշաճ կազմակերպմանն ուղղված աշխատանքներին, պրակտիկաների կազմակերպման և անցկացման արդյունքների քննարկմանը, դրանց հաշվետվությունների վերլուծությանը, ինչպես նաև դրանց արդյունավետության բարձրացման ուղղությամբ ապագայում կոնկրետ ջանքեր ձեռնարկելու անհրաժեշտությանը, իրավապահ մարմիններում պրակտիկայի կազմակերպման հիմնախնդիրներին: Բացի դրանից, քննարկվել են նաև միջանկյալ ստուգողական աշխատանքների հարցաշարերի հաստատումը, քննական հարցաշարերի հաստատումը, ամփոփիչ ավարտական քննությունների հարցաշարերի հաստատում, երաշխավորում հրապարակման, մագիստրոսական ատենախոսությունների, ավարտական և կուրսային աշխատանքների թեմաների հաստատում, դրանց կատարման ընթացքի նկատմամբ վերահսկողություն, դրանց նախապաշտպանության իրականացում, դասալսումների արդյունքների քննարկում և ըստ անհրաժեշտության ընթացիկ հարցերի քննարկում: Իրականացված աշխատանքները գնահատվում են դրական և բարելավման ուղղությամբ ձեռնարկվում են համապատասխան միջոցներ:* |

| Հաշվետու տարում ամբիոնի նիստերում քննարկված հիմնական հարցերը, իրականացված աշխատանքների գնահատման և բարելավման ուղղությամբ ընդունված որոշումները և հաստատված մեխանիզմները: | | |
|---|---|---|
| Արձ.N, ամսաթիվ | Քննարկման հարցերը | Ընդունված որոշումները |
| **Արձ.N8**<br>**14.01.2022թ.** | 1. 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի դասընթացների ուսումնամեթոդական փաթեթների, առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների և հարցաշարերի հաստատման մասին:<br>2.Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին:<br>3.Պատմություն մասնագիտությամբ բակալավրի կրթական ծրագրի մասնագրի քննարկման մասին:<br>4.ՀՊՄՀ Էլեկտրոնային ուսուցման Google Classroom հարթակում դասախոսների ուսումնական գործունեության մասին մասին:<br>5. 2021-2022 ուստարում ամբիոնի կողմից առկա բակալավրիատի 4-րդ կուրսում դասավանդվող դասընթացի վերանանվանման հարցը: | **1.ՈՐՈՇԵՑԻՆ.-** Հաստատել 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի դասընթացների ուսումնամեթոդական փաթեթները, առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները և հարցաշարերը**:**<br>**2.ՈՐՈՇԵՑԻՆ.-** Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների կատարման ընթացքը համարել բավարար:<br>**3.ՈՐՈՇԵՑԻՆ.-** Ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ա. Փիլիպոսյանի գլխավորությամբ հանձնարարել ամբիոնի դասախոսներին ուսումնասիրել փաստաթուղը և առաջիկայում ներկայացնել ամբիոնի հաստատմանը:<br>**4.ՈՐՈՇԵՑԻՆ.-** 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի Classroom հարթակում դասախոսների ուսումնական գործունեությունը համարել բավարար:<br>5.**ՈՐՈՇԵՑԻՆ.-** 2021-2022 ուստարում հայոց պատմության ամբիոնի կողմից առկա բակալավրիատի 4-րդ կուրսում դասավանդվող «Հայ հասարակական-քաղաքական հոսանքներ» դասընթացը վերանվանել հետևյալ վերնագրով՝ «Հայոց |

| | | |
|---|---|---|
| | | պատմության հիմնահարցեր» (Դասախոս՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Մելքոնյան): |
| **Արձ.N9**<br>**11.02.2022թ.** | 1.Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին:<br>2.Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի պատմության առկա բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողուհի Նուշիկ Խոսրովյանի ավարտական աշխատանքի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:<br>3. ՀՊՄՀ էլեկտրոնային ուսուցման Google Classroom հարթակում դասախոսների ուսումնական գործունեության մասին մասին: | **1.ՈՐՈՇԵՑԻՆ.-** Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների կատարման ընթացքը համարել բավարար:<br>**2.ՈՐՈՇԵՑԻՆ.-** Հաստատել Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի պատմության առկա բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողուհի Նուշիկ Խոսրովյանի հետևյալ թեման՝ Կաթողիկոսական աթոռի տեղափոխումը Սսից Էջմիածին: Թեմայի դասավանդման առանձնահատկությունները:<br>Գիտ. ղեկավար՝ Պատմ. գիտ. թեկնածու, պրոֆ. Ա. Հարությունյան:<br>3.**ՈՐՈՇԵՑԻՆ.-** 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի Classroom հարթակում դասախոսների ուսումնական գործունեությունը համարել բավարար: |
| **Արձ.N10**<br>**07.04.2022թ.** | 1.Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին՝ ամբիոնի դոցենտ, պատմ. գիտ. թեկնածու Էդգար Գագիկի Հովհաննիսյանի թեկնածությունը առաջադրելու մասին:<br>2.Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների կատարման ընթացքի մասին: | 1.***ՈՐՈՇԵՑԻՆ /ՄԻԱՁԱՅՆ/.-*** Բաց քվեարկությամբ պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար առաջադրել պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ Էդգար Գագիկի Հովհաննիսյանի թեկնածությունը:<br>2.**ՈՐՈՇԵՑԻՆ.-** Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների կատարման ընթացքը համարել |

| | | |
|---|---|---|
| | | բավարար: |
| **Արձ.N11**<br><br>**21.04.2022թ.** | 1. Պատմություն և հասարակագիտություն մասնագիտության առկա բակալավրիատի 4-րդ կուրսի ավարտական աշխատանքների նախապաշտպանության մասին:<br><br>2. Ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա. Փիլիպոսյանի հաղորդումը մագիստրատուրայի ընդունելության քննության հարցաշարի հաստատման մասին:<br><br>3. ՀՊՄՀ Էլեկտրոնային ուսուցման Google Classroom հարթակում դասախոսների ուսումնական գործունեության մասին մասին: | **1.ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաշվի առնելով, որ ուսանողները ներկայացրել են ղեկավարների կողմից հրապարակային պաշտպանության երաշխավորված աշխատանքներ և նախապաշտպանությանը ներկայացրեցին նաև իրենց աշխատաքների հիմնական դրույթները, որոշեցին ներկայացված աշխատանքներն երաշխավորել հրապարակային պաշտպանության:<br><br>**2.ՈՐՈՇԵՑԻՆ.-** Հաստատել ներկայացված հարցաշարը:<br><br>**3.ՈՐՈՇԵՑԻՆ.-** 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի Classroom հարթակում դասախոսների ուսումնական գործունեությունը համարել բավարար: |
| **Արձ.N12**<br><br>**22.04.2022թ.** | 1.Պատմություն և հասարակագիտություն մասնագիտության առկա մագիստրատուրայի 2-րդ կուրսի մագիստրոսական ատենախոսությունների նախապաշտպանության մասին:<br><br>2. Հայոց պատմության ամբիոնի հայցորդ Ռուզաննա Սարգսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման հարցը:<br><br>3.2022-2023 ուստարվա մագիստրատուրայի ընդունելության հարցաշարի հաստատման մասին:<br>4.ՀՊՄՀ Էլեկտրոնային ուսուցման | **1. ՈՐՈՇԵՑԻՆ** – Հաշվի առնելով, որ ուսանողները ներկայացրել են ղեկավարների կողմից հրապարակային պաշտպանության երաշխավորված աշխատանքներ և նախապաշտպանությանը ներկայացրեցին նաև իրենց աշխատաքների հիմնական դրույթները, որոշեցին ներկայացված աշխատանքներն երաշխավորել հրապարակային պաշտպանության:<br><br>**2.ՈՐՈՇԵՑԻՆ /ՄԻԱՁԱՅՆ/.-** Հաստատել Հայոց պատմության ամբիոնի հայցորդ Ռուզաննա Սարգսյանի թեկնածուական ատենախոսության հետևյալ թեման՝ |

| | | |
|---|---|---|
| | Google Classroom հարթակում դասախոսների ուսումնական գործունեության մասին մասին: | «Ֆրանսիայի հայ համայնքի կառույցները և նրանց հայապահպան գործունեությունը 20-րդ դարի վերջերին և 21-րդ դարի սկզբներին» /Է.00.01 - «Հայոց պատմություն» մասնագիտությամբ/:<br>Գիտ. ղեկավար՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ Է. Հովհաննիսյան:<br>3.**ՈՐՈՇԵՑԻՆ.-** Ներկայացված հարցաշարը հաստատել /կից տես հարցաշարը/:<br><br>**4.ՈՐՈՇԵՑԻՆ.-** 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի Classroom հարթակում դասախոսների ուսումնական գործունեությունը համարել բավարար: |
| **Արձ.N13**<br><br>**02.06.2022թ.** | 1. 2021-2022 ուստարվա առկա ուսուցման ամփոփիչ ատեստավորման քննության և մագիստրոսական ատենախոսությունների պաշտպանության արդյունքների մասին:<br><br>2.ՀՊՄՀ էլեկտրոնային ուսուցման Google Classroom հարթակում դասախոսների ուսումնական գործունեության մասին մասին: | **1.ՈՐՈՇԵՑԻՆ** – 2021-2022 ուստարվա առկա ուսուցման ամփոփիչ ատեստավորման քննության և մագիստրոսական ատենախոսությունների պաշտպանության արդյունքները համարել բավարար:<br><br>2.**ՈՐՈՇԵՑԻՆ.-** 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի Classroom հարթակում դասախոսների ուսումնական գործունեությունը համարել բավարար: |
| **Արձ.N1**<br><br>**26.08.2022թ.** | 1.Ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա. Փիլիպոսյանի հաղորդումը՝ 2022-2023 ուս. տարվա նախապատրաստման մասին:<br><br>Պրոֆ. Ա. Փիլիպոսյանը հաղորդեց, որ 2022-2023 ուս. տարվա նախապատրաստական | **1.ՈՐՈՇԵՑԻՆ.-** 2022-2023 ուս. տարվա նախապատրաստական աշխատանքները համարել բավարար:<br><br>**2.ՈՐՈՇԵՑԻՆ.-**Ներկայացված աշխատանքային պլանը հաստատել /կից տես պլանը/: |

| | | |
|---|---|---|
| | աշխատանքները կատարվել են, դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածությունը պատրաստ է:<br><br>**2.**Ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա. Փիլիպոսյանի հաղորդումը՝ 2022-2023 ուս. տարվա աշխատանքային պլանի հաստատման մասին:<br><br>**3.**2022-2023 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի առաջին կիսամյակի ուսումնական ծրագրով նախատեսված առարկաների ուսումնամեթոդական փաթեթների /ԱՈՒՄՓ/, քննական հարցաշարերի, առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատման մասին:<br><br>4.2022-2023 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի առաջին կիսամյակի քննությունների հարցաշարերի և հարցատոմսերի հաստատման մասին: | **3.ՈՐՈՇԵՑԻՆ.-** Հաստատել 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի բակալավրիատում և մագիստրատուրայում ուսուցանվող առարկաների ուսումնամեթոդական փաթեթները /ԱՈՒՄՓ/, առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները:<br><br>**4.ՈՐՈՇԵՑԻՆ.-** Հաստատել 2022-2023 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի առաջին կիսամյակի քննությունների հարցաշարերն ու հարցատոմսերը: |
| **Արձ.N2**<br><br>**06.09.2022թ.** | **1.**Ամբիոնի պրոֆեսոր, պատմ. գիտ. դոկտոր Սամվել Պողոսյանի՝ «Կիլիկիան ազատագրելու նախագծերը 1914-1918 թթ.:Հայկական լեգեոնի կազմավորումը» գրքի  քննարկումը:<br><br>**2.**2022-2023 ուստարվա մագիստրատրոսական թեզերի, ավարտական և կուրսային աշխատանքների թեմաների և գիտական ղեկավարների հաստատման մասին:<br><br>**3.**2022-2023 ուստարվա ընտրովի | **1.ՈՐՈՇԵՑԻՆ /ՄԻԱՁԱՅՆ/.-** Ամբիոնի պրոֆեսոր, պատմ. գիտ. դոկտոր Սամվել Պողոսյանի՝ «Կիլիկիան ազատագրելու նախագծերը 1914-1918 թթ.: Հայկական լեգեոնի կազմավորումը» գիրքը երաշխավորել տպագրության:<br><br>**2.ՈՐՈՇԵՑԻՆ.-** Հաստատել 2022-2023 ուստարվա մագիստրատրոսական թեզերի, ավարտական և կուրսային աշխատանքների թեմաները և գիտական ղեկավարներին /կից տես ցուցակը/:<br><br>**3.ՈՐՈՇԵՑԻՆ. –** Հաստատել 2022-2023 |

| | | |
|---|---|---|
| | դասընթացների հաստատման մասին: | ուստարում ամբիոնի՝ բակալավրիատում և մագիստրատուրայում դասավանդվող հետևյալ դասընթացները /կից տես ցուցակը/: |
| **Արձ.N3**<br><br>**19.09.2022թ.** | **1.** Առկա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի պրակտիկայի ղեկավար Ա. Եփրիկյանի հաղորդումը 2022-2023 ուստարվա 3-րդ կուրսի և 4-րդ կուրսի մանկավար-ժական պրակտիկայի ընթացքի մասին:<br><br>**2.**Առկա ուսուցման մագիստրատուրայի պրակտիկայի ղեկավար Ա. Եփրիկյանի հաղորդումը 2022-2023 ուստարվա մագիստրատուրայի 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի նախապատրաստման մասին:<br><br>**3.**2022-2023 ուստարվա հեռակա ուսուցման մագիստրատրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների և գիտական ղեկավարների հաստատման մասին: | **1.ՈՐՈՇԵՑԻՆ.-** 2022-2023 ուստարվա 3-րդ կուրսի և 4-րդ կուրսի մանկավար-ժական պրակտիկայի ընթացքը համարել բավարար:<br><br>**2.ՈՐՈՇԵՑԻՆ.-** 2022-2023 ուստարվա մագիստրատուրայի 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի նախապատրաստական աշխատանքները համարել բավարար:<br><br>**3.ՈՐՈՇԵՑԻՆ.-** Հաստատել 2022-2023 ուստարվա հեռակա ուսուցման մագիստրատրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաները և գիտական ղեկավարներին /կից տես ցուցակը/: |
| **Արձ.N4**<br><br>**11.11.2022թ.** | **1.** Առկա ուսուցման պրակտիկայի ղեկավար Ա. Եփրիկյանի հաղորդումը 2022-2023 ուստարվա մագիստրատուրայի 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի արդյունքների մասին:<br>**2.**Առկա ուսուցման պրակտիկայի ղեկավար Ա. Եփրիկյանի հաղորդումը | 1.**ՈՐՈՇԵՑԻՆ.-** 2022-2023 ուստարվա մագիստրատուրայի 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի արդյունքները համարել բավարար:<br>**2.ՈՐՈՇԵՑԻՆ.-** 2022-2023 ուստարվա բակալավրիատի 3-րդ կուրսի և 4-րդ կուրսի մանկավար-ժական |

| | | |
|---|---|---|
| | 2022-2023 ուստարվա բակալավրիատի 3-րդ կուրսի և 4-րդ կուրսի մանկավար-ժական պրակտիկաների ընթացքի մասին:<br>3.Հեռակա ուսուցման պրակտիկայի ղեկավար Մ. Եղյանի հաղորդումը 2022-2023 ուստարվա բակալավրիատի 4-րդ կուրսի և 5-րդ կուրսի մանկավար-ժական և մագիստրատուրայի 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկաների կազմակերպման մասին:<br>**4.**«Նոր մոտեցումներ Հայաստանի պատմության և մշակույթի որոշ հիմնահարցերի ուսումնասիրման և դասավանդման ոլորտում» (III) ՀՊՄՀ 100-ամյակին նվիրված ամբիոնի հոդվածների ժողովածուն հրատարակության երաշխավորելու հարցը: | պրակտիկաների ընթացքը համարել բավարար:<br>**3.ՈՐՈՇԵՑԻՆ.-**2022-2023 ուստարվա բակալավրիատի 4-րդ կուրսի և 5-րդ կուրսի մանկավար¬ժական և մագիստրատուրայի 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկաների կազմակերպումը համարել բավարար:<br><br>**4.ՈՐՈՇԵՑԻՆ. /ՄԻԱՁԱՅՆ/-** Նշված ժողովածուն երաշխավորել հրատարակության: |
| **Արձ.N5**<br><br>**25.11.2022թ.** | 1. Մկրտիչ Վանիկի Դանիելյանի «1903 թ. հունիսի 12-ի օրենքը և հայերի համաժողովրդական հակացարական ելույթները 1903-1905 թթ.» թեկնածուական ատենախոսության քննարկումը:<br><br>2. Ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա. Փիլիպոսյանի հաղորդումը՝ ամբիոնի հեռակա ասպիրանտ Մարինե Սահրադյանին ատեստավորելու մասին:<br><br>3. Ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա. Փիլիպոսյանի հաղորդումը՝ ամբիոնի հայցորդ Ռուզաննա Սարգսյանին | 1.ՈՐՈՇԵՑԻՆ /ՄԻԱՁԱՅՆ/.- Մկրտիչ Վանիկ Դանիելյանի «1903 թ. հունիսի 12-ի օրենքը հայերի համաժողովրդական հակացարակա ելույթները 1903-1905 թթ.» թեկնածուակա ատենախոսությունը դրական կարծիքո երաշխավորել հրապարակայի պաշտպանության /կից տես գրավո կարծիքը/:<br><br>2.ՈՐՈՇԵՑԻՆ.- Հայոց պատմության ամբիոնի հեռակա ասպիրանտ Մարինե Սահրադյանի հաշվետվության հիման վրա նրան ատեստավորել /կից տես հաշվետվությունը/:<br><br>3.ՈՐՈՇԵՑԻՆ.- Հայոց պատմության |

| | | |
|---|---|---|
| | ատեստավորելու մասին:<br><br>4. Առկա ուսուցման պրակտիկայի ղեկավար Ա. Եփրիկյանի հաղորդումը 2022-2023 ուստարվա առկա ուսուցման բակալավրիատի 3-րդ կուրսի մանկավար-ժական պրակտիկայի ընթացքի մասին:<br>5. Հեռակա ուսուցման պրակտիկայ ղեկավար Մ. Եղյանի հաղորդումը 2022 2023 ուստարվա բակալավրիատի 4-ր կուրսի և 5-րդ կուրսի մանկավար-ժակա և մագիստրատուրայի 2-րդ կուրս մանկավարժահետազոտական պրակտիկաների ընթացքի մասին:<br>6. Ամբիոնի վարիչ, պրոֆ. Ա. Փիլիպոսյանի հաղորդումը` ամբիոնի 2022 թ. հաշվետվության հաստատման մասին: | ամբիոնի հայցորդ Ռուզաննա Սարգսյանի հաշվետվության հիման վրա նրան ատեստավորել /կից տես հաշվետվությունը/:<br><br>4.ՈՐՈՇԵՑԻՆ.- 2022-2023 ուստարվա առկ ուսուցման բակալավրիատի 3-րդ կուրս մանկավար-ժական պրակտիկայի ընթացք համարել բավարար:<br><br>5.ՈՐՈՇԵՑԻՆ.- 2022-2023 ուստարվ բակալավրիատի 4-րդ կուրսի և 5-րդ կուրս մանկավար-ժական և մագիստրատուրայի 2 րդ կուրսի մանկավարժահետազոտակա պրակտիկաների ընթացքը համարե բավարար:<br><br>6.ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել Հայոց պատմության ամբիոնի 2022 թ. հաշվետվությունը /կից տես հաշվետվությունը/: |

| Պրոֆեսորադասախոսական կազմը | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Կանայք | Դոկտոր | Պրոֆե սոր | Գիտ.թ եկն. | Դոցենտ | Ասիս-տենտ | Դասա խոս | Ընդ-ը |
| Հաստիքային | 3 | 3 | 5 | 8 | 6 | - | - | 11 |
| Համա տեղող | - | - | - | - | - | - | - | - |
| Ժամա վճարայ ին | - | 2 | 2 | 1 | - | - | 1 | 3 |
| Ընդա-մենը | 3 | 5 | 7 | 9 | 6 | - | 1 | 14 |

2. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

| Ամբիոնը ուսումնամեթոդական գործունեությունը հաշվետու տարում: |
|---|
| *Ամբիոնի ուսումնամեթոդական գործունեության արդյունքում առարկայական փաթեթները լրամշակվել և համապատասխանեցվել են արդի գիտակրթական պահանջներին: Համակարգվել և փաթեթների մեջ են ներառվել նոր մասնագիտական ձեռնարկները և կրթական ու մեթոդական բնույթի հրապարակումները:* |

| Ամբիոնի մեթոդական կոնֆերանսների և սեմինարների քանակը - 15 | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Միջազգային | | Հանրապետական | | Քաղաքային | | Համալսարանական | | Ամբիոնային | |
| կոնֆ. | սեմ | կոնֆ. | սեմ | կոնֆ | սեմ | կոնֆ. | սեմ | կոնֆ | սեմ |
| «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության կոնվենցիա» | | Կիպրոսում կիլիկիայության հաստատման գործընթացը 1909-1922թթ. | | | | «Նոր մոտեցումներ Հայաստանի պատմության և մշակույթի որոշ հիմնահարցերի ուսումնասիրման և դասավանդման ոլորտում» (III) ՀՊՄՀ 100-ամյակին նվիրված | | | |
| | | The relations between the Catholicosate of Cilicia and the French mandate authorities of Lebanon in the 1920s-1930s. | | | | | | | |
| | | Երուսաղեմապատկան թեմերի Կիլիկիո կաթողիկոսությանը փոխացման գործընթացը և դրա հետևանքները | | | | | | | |
| | | | | | | | | | |
| | | Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը 1920 թ. ապրիլյան թիֆլիսյան վեհաժողովում և Անդրկովկասում | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Անտանտի պետությունների ռազմաքաղաքական ներկայացուցչություն ների դիրքորոշումը | | | | | | | |
| | | The position of European countries in Nakhichevan in 1919-1920 | | | | | | | |
| | | <<Կիլիկիո Հայոց կաթողիկոսությունը պատմության քառուղիներում. Սիսից մինչև Անթիլիաս>> թեմայի դասավանդման ժամանակակից մոտեցումները | | | | | | | |
| | | Հայոց ցեղասպանության ուսուցման բազմատեսանկյուն մոտեցումը | | | | | | | |
| | | Историческая тема в культурном наследии армянского народа и ее актуальность в связи с боевуми действиями на Северном Кавказе в 1942-1943 | | | | | | | |
| | | The Policy of European Powers towards Armenia (1918-1920) | | | | | | | |
| | | Կիլիկիայի ազատագրումը հայկական լեգեոնի ուժերով | | | | | | | |
| | | Կիլիկիան առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին | | | | | | | |

| Գիտաուսումնական և գիտամեթոդական դրամաշնորհներ | | | |
|---|---|---|---|
| Անվանում | Ժամկետ | Ֆինանսավորման ծավալ | Ամբիոնի մասնակից-անդամների քանակ |
| «Հայաստանը Անդրկովկասում եվրոպական երկրների ռազմա-քաղաքական ներկայացուցչությունների | 2021-2024 թթ. | 16 մլն. դրամ | 3 |

| | | | |
|---|---|---|---|
| հետ փոխհարաբերությունների համատեքստում (1917-1920 թթ.)»: | | | |
| «Մեծի Տանն Կիլիկիո կաթողի-կոսությունը 1914-1939թթ. ազգա-յին-քաղաքական գործընթացների և Սփյուռքի հայապահպանության հոլովույթում» | 2020-2023 թթ. | 27 մլն. դրամ | 2 |
| «Միսիոներական քարոզչությունը և հայ կաթոլիկ ու բողոքական հարանվանությունների գործունեությունն Արևմտյան Հայաս-տանում և Կիլիկիայում 1896-1921թթ»: | 2021-2024 թթ. | 16 մլն. դրամ | 2 |

3. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

| Ամբիոնի հետազոտական գործունեությունը: |
|---|
| *Ամբիոնի 2022 թ. գիտական աշխատանքներն ունեցել են գիտագործնոկոն և գիտահետազոտական բնույթ: Գիտահետազոտական աշխատանքները հիմնականում վերաբերում են Հայաստանի պատմության, մշակույթի, պատմամշակութային բազմահազարամյա ժառանգության, նոր և նորագույն շրջանների քաղաքական, տնտեսական, սոցիալական բազմաբնույթ գործընթացներին: Մասնավորապես հրատարակվել են 2 տասնյակից ավել հոդվածներ ու գրքեր Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. II հազ. կեսի մշակութային փոխառնչությունների, XIX դ. Վերջում Վանի վիլայեթում տիրող սոցիալական իրավիճակի, I աշխարհամարտի և Հայոց ցեղասպանության, I հանրապետության ռազմական ուժերի ու հակահետախուզության, Արցախյան պատերազմի, Արցախի կարգավիճակի, արդի պայմաններում Հայաստանի քաղաքական դիրորոշման և այլ հիմնախնդիրների շուրջ:*<br><br>*Գիտագործնական աշխատանքներն ունեցել են մի քանի ուղղվածություն: Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնը, որպես առաջատար կազմակերպություն, քննարկել ու կարծիք է տրամադրել Հայագիտության ոլորտի 5 ատենախոսությունների (թեկնածուական և դոկտորական): Ամբիոնի վարիչ Ա. Փիլիպոսյանը, որպես հայ-լեհական միջազգային հնագիտական արշավախմբի ղեկավար 2022 թ. օգոստոս- սեպտեմբեր ամիսներին պեղումներ է իրականացրել ՀՀ Գեղարքունիքի մարզի Քանագեղ և ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորում հնավայրերումում:*<br><br>*Հաշվետու ժամանակահատվածում Հայոց պատմության ամբիոնում պարբերաբար լսվել ու քննարկվել են ասպիրանտների ու հայցորդների կատարած աշխատանքները: Տրվել են համապատասխան ցուցումներ, նիստերում լսվել յուրաքանչյուրի անհատական գիտական գործունեության արդյունքները:* |
| Ամբիոն ՊԴԱ և ուսանողների գիտակահետազոտական աշխատանքները, հրապարակումները, անցկացրած կոնֆերանսները, սեմինարները, օլիմպիադաները հաշվետու տարում: |
| *Ամբիոնի դասախոսները պարբերաբար ներկայացրել են իրենց մանկավարժական և գիտական գործունեությանը վերաբերող տեղեկատվություն, որը քննարկվել է ամբիոնի նիստերում և ստացել համապատասխան ծանկերպում:* |

| Ամբիոնի հաշվետու տարում իրականացրած հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցառումները: |
|---|
| *Ամբիոնի դասախոսների կողմից 2022 թվականին հրատարակված աշխատությունները գործուն ազդեցություն են ունեցել ուսումնական գործընթացի հետագա զարգացման վրա և իրականացվել են գիտություն-կրթություն-դասընթաց փոխկապակցված մեխանիզմների համատեքստում:* |

Ա. Պրոֆեսորադասախոսական

| Ամբիոնի գիտական ուղղություններ /նաև՝ տնտ, պայմանագրային, դրամաշնորհային/ | | | | |
|---|---|---|---|---|
| Ուղղության անվանումը | Աշխ-ի տեսակը | Ֆին.աղբյուր | Ֆին.ծավալ | Կատարողներ |
| «Հայաստանը Անդրկովկասում եվրոպական երկրների ռազմա-քաղաքական ներկայացուցչություն-ների հետ փոխհարաբերությունն երի համատեքստում (1917-1920 թթ.)»: | Հիմնարար | Գիտության պետական կոմիտե | 16 մլն. դրամ | 3 |
| «Մեծի Տանն Կիլիկիո կաթողի-կոսությունը 1914-1939թթ. ազգա-յին-քաղաքական գործընթացների և Սփյուռքի հայապահպանության հոլովույթում» | Հիմնարար | Գիտության պետական կոմիտե | 27 մլն. դրամ | 2 |
| «Միսիոներական քարոզչությունը և հայ կաթոլիկ ու բողոքական հարանվանություններ ի գործունեությունն Արևմտյան Հայաս-տանում և Կիլիկիայում 1896-1921թթ»: | Հիմնարար | Գիտության պետական կոմիտե | 16 մլն. դրամ | 2 |

| ՊԴԱ-ի կողմից հրատարակված մենագրություններ | | | |
|---|---|---|---|
| Հեղինակ Ա.Ա.Հ. | Մենագրության անվանումը | Հր.անուն և տարի | Ծավալ |
| Վիրաբյան Վանիկ | Խաչիսարի (Չարդախլու) հերոսական պատմությունից | Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, 2022 | 128 |

| Ամբիոնի աշխատակիցների գիտական հոդվածներ և ժողովածուներ, զեկույցներ և թեզիսներ | | |
|---|---|---|
| Հեղինակ Ա.Ա.Հ. | Հոդվածի , զեկույցի անվանումը | Ծավալ |
| Пилипосян А.С. | Штандарт позднебронзового периода из Ширакавана | |
| Սիմոնյան Հասմիկ, Փիլիպոսյան Աշոտ, Զաքյան Տիգրան | Հացառատի ավերված ուրարտական դամբարանը | |
| Փիլիպոսյան Աշոտ | Սաթից պատրաստված առարկաներ Հայաստանի բրոնզերկաթեդարյան հնագիտական համալիրներից | |
| Վիրաբյան Վանիկ | Մահմեդական բնակչության 1919 թ. հակահայկական խռովության ճնշումը Զող-Բասարգեչարի շրջանում և հայկական պետականության ամբողջականության վերահաստատումը (մաս 1) | 23-37 |
| Վիրաբյան Վանիկ | Լեռնային Ղարաբաղը հայ-ադրբեջանական տարածքային հակամարտության և Անդրկովկասում Մեծ Բրիտանիայի ռազմաքաղաքական ներկայացուցչության գործունեության համատեքստում 1918-1920 թթ. | 50-71 |
| Վիրաբյան Վանիկ | Մահմեդական բնակչության 1919 թ. Հակահայկական խռովության ճնշումը Զող-Բասարգեչարի շրջանում և հայկական պետականության ամբողջականության վերահաստատումը (մաս 2 և վերջին) | 22-31 |
| Վիրաբյան Վանիկ | Armenian-Azerbaijani territorial conflict and the Karabakh Issue In the context of the activities of the military-and-political representation of Great Britain in the Republic of Armenia and Transcaucasia in 1918-1920 | 39-73 |
| Վիրաբյան Վանիկ | Հայաստանում և Անդրկովկասում Իտալիայի ռազմաքաղաքական ներկայացուցչության գործունեության հարցի շուրջ (1918-1920 թթ.) | 31-47 |
| Վիրաբյան Վանիկ | The Voluntary Army Of South Of Russia And Republic Of Armenia In The Confrontation Of Intelligence Services Of Caucasus In 1918-1920 | |
| Գևորգյան Էդիկ | Ազգային քաղաքականությունը Խորհրդային Հայաստանում /1920-ական թթ. սկիզբ/: | |
| Պողոսյան Սամվել | Ռազմաքաղաքական իրավիճակը կիլիկիահայերի համար 1920 թ.: Մեծ տերությունների իմպերիալիստական հակասությունները | |
| Պողոսյան Սամվել | Լիբանանի ու Սիրիայի ազատագրումը թուրքերից 1918 թ. և Հայկական լեգեոնը | |
| Եփրիկյան Արմինե | Հակահայկական խռովությունները և դաշնակիցների դիրքորոշումը: Գողթանի ինքնապաշտպանական մարտերը | 50-71 |
| Եփրիկյան Արմինե | The position of W. Haskel's mission on the issue of Nakhichevan | 77-90 |
| Եփրիկյան Արմինե | Карабахский конфликт в контексте армяно-турецких отношений | 196-217 |
| Մելքոնյան Էդուարդ | Ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի ներդրումը հայ ազգային-ազատագրական շարժման պատմության կեղծարարների մերկացման գործում: | |
| Եդյան Մարիամ, Ավանեսյան Արմինե | Междисциплинарность как важный компонент современного высшего образования | |
| Խաչատրյան Սուսաննա, | Case Study մեթոդը պատմության դասավանդման | |

| | | |
|---|---|---|
| Եղյան Մարիամ | գործընթացում | |
| Խաչատրյան Սուսաննա, Յակոբյան Ռոզա | Բեռլինի կոնգրեսը և Յայկական հարցը: Թեմայի ուսուցման փորձ հանրակրթական դպրոցում: | |
| Խաչատրյան Սուսաննա, Յամբարձումյան Լուսինե | Որոշ դիտարկումներ հիմնական դպրոցում Տաղավար տոների ուսուցման վերաբերյալ | |

| Ամբիոնի ՊԴԱ-ի որակավորման բարձրացման և վերապատրաստման տարեկան գրաֆիկ | | | |
|---|---|---|---|
| Դասախոս Ա.Ա.Յ./հաստիք | ՈԲ-ի անցկացման հաստատություն | ՈԲ ժամկետները | Արդյունք |
| Փիլիպոսյան Աշոտ | ՅՊՄՅ | 12.04-13.05. | Յավաստագրերի տրամադրում |
| Յովհաննիսյան Էդգար | ՅՊՄՅ | 12.04-13.05. | Յավաստագրերի տրամադրում |
| Պողոսյան Սամվել | ՅՊՄՅ | 12.04-13.05. | Յավաստագրերի տրամադրում |
| Գևորգյան Էդիկ | ՅՊՄՅ | 12.04-13.05. | Յավաստագրերի տրամադրում |
| Մելքոնյան Էդուարդ | ՅՊՄՅ | 12.04-13.05. | Յավաստագրերի տրամադրում |
| Եփրիկյան Արմինե | ՅՊՄՅ | 12.04-13.05. | Յավաստագրերի տրամադրում |
| Խաչատրյան Սուսաննա | ՅՊՄՅ | 12.04-13.05. | Յավաստագրերի տրամադրում |
| Եղյան Մարիամ | ՅՊՄՅ | 12.04-13.05. | Յավաստագրերի տրամադրում |

Բ. Ուսանողական

| Ուսանողական գիտական հետազոտական ընկերություններ և խմբակներ | | | |
|---|---|---|---|
| | | | |
| ՈւԳԸ | | | |
| | | | |
| | | | |

| Յամատեղ գիտահետազոտական աշխատանքներ | | | |
|---|---|---|---|
| Դասախոս Ա.Ա.Յ. | Ուսանող Ա.Ա.Յ. | Յոդվածի անունը | Յրատ.անվ-մ |
| Պողոսյան Սամվել | Մուխսյան Ռուզաննա | The Reasons and Process of the Armenian Genocide of 1915-1916 | Մեսրոպ Մաշտոց Յամալսա-րա-նի Լրատու, 2022, թիվ 1 (27) https://drive.google.com/file/d/11PzkBMJyKXxpsusG-3EBOCoJaBMik |

| | | | |
|---|---|---|---|
| | | | JHo/view<br><br>(էջ 71-84) |
| Պողոսյան Սամվել | Մուխսյան Ռուզաննա | The Karabakh conflict 1988-1991: Origins and Processes | Myth and Identities, Budapest, 2022 |

4. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

| |
|---|
| Ամբիոնի արտաքին կապերի և միջազգայնացման աշխատանքների ընդհանուր նկարագրությունը և վերլուծությունը հաշվետու տարում: |
| (տեքստը այստեղ) |
| Ամբիոնի համագործակցությունը տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ հաշվետու տարում: |
| *2022 թ. սեպտեմբերին Հայոց պատմության ամբիոնի, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի և ՀՊՄՀ թանգարանի միջև ձեռք բերված համաձայնության շրջանակներում կազմակերպվել է Հայաստանի պատմամշակութային ժառանգությանը նվիրված միջոցառում, որին մասնակցել են բուհի պատմության ու հասարակագիտության և կուլտուրայի ֆակուլտետների ուսանողները:* |

| Համագործակցություն արտասահմանյան բուհերի ամբիոնների հետ | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Բուհ/ամբիոն /երկիր | Համագործակցության ձևը | | | | |
| | Ուսումնական | Մեթոդական | Գիտական | Հետազոտական | Այլ |
| Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարան, Հայագիտության ամբիոն, | + | | + | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Հունգարիա | | | | | |
| ՌԴ Եկատերինբուրգի Ուրալյան դաշնային համալսարանի պատմության ֆակուլտետի հնագիտության ամբիոն | + | | + | | |

5. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

| Ամբիոնի աշխատանքը հանրության շրջանում և հանրակրթական դպրոցների աշակերտների հետ, կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները: |
|---|
| *Ամբիոնի դասախոսները հաշվետու ժամանակաշրջանում բազմաթիվ ելույթներ են ունեցել ռադիոյով, հեռուստատեսությամբ և տարբեր ԶԼՄ-ներով, հանդիպել են ավագ դպրոցների ավարտական դասարանների աշակերտների հետ, առաջարկել և ուղղորդել մասնագիտությունների ընտրության հարցում:* |

| Աշխատանք հանրակրթական դպրոցներում՝ աշակերտների հետ | | | |
|---|---|---|---|
| Աշխ-ի տեսակը | Համակարգող Ա.Ա.Հ. | Միջոցառման անվանումը | Ժամկետը |
| Ուսումնական | Ս. Պողոսյան | | 05.09-09.09 |
| Ուսումնական | Ա. Եփրիկյան | | 03.10-07.10 |
| Ուսումնական | Մ. Եղյան | | 03.11-07.11 |

6. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

| |
|---|
| Ներկայացնել որակի ապահովման ներքին համակարգի աշխատանքները և արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը: |
| *Հաշվետու տարում ամբիոնը վարիչը դեկանատի ներկայացուցիչների հետ համատեղ, պարբերաբար իրականացրել է դասախոսների դասալսումների և դրանց արդյունքների քննարկման մոնիտորինգ: Առանձնացվել են այն հիմնական ոլորտներն ու արդյունավետ մեթոդները, որոնք առավել շահեկան են դասընթացն արդի կրթական չափորոշիչներին համապատասխան կազմակերպելու և անցկացնելու համար:Բացի դրանից, ուսումնական տարվա սկզբում, թարմացվել և նորացվել են ամբիոնի կողմից դասավանդվող առարկաների ուսումնական փաթեթները և թեմատիկ տրոհումները:* |
| Ներկայացնել գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: |
| *Հաշվետու ժամանակահատվածում դասախոսների մասնագիտական պատրաստվածության բարձրացման և ուսանողների դասընթացների արդյունավետության համար, դասախոսություններին և ներֆակուլտետային ասուլիսներին հրավիրվել են հանրապետության այլ բուհերի և գիտական կենտրոնների փորձառու մասնագետներ: Արտաքին և ներքին շահակիցների կարիքների ուսումնասիրությունը կատարվել է հիմնականում համեմատման և համադրման մեթոդներով: Համեմատվել են ֆակուլտետում գործող ուսումնական պլանները և հանրակրթական ծրագրերը: Վերլուծությունների արդյունքում հանգել են հետևյալ եզրակացությանը. մասնագիտական կրթական ծրագրերի վերջնարդյունքները հիմնականում համապատասխանում են դպրոցական առարկայական ծրագրերին:* |

| Ամբիոնի դասախոսների կատարած աշխատանքի որակի ապահովում և մշտադիտարկում | | |
|---|---|---|
| Միջոցառման անվանումը | Պատասխանատու | Արդյունքահենություն |
| Դասալսումներ | Ա. Փիլիպոսյան | Լավագույն փորձի փոխանակում |
| Ուսումնական գործընթացի մշտադիտարկում | Ս. Խաչատրյան | Ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպում |